Հավելված

Ծրագրի առաջարկ

Դիմորդի անվանումը	Կապանի համայնքապետարան
Ծրագրի անվանումը	<<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզահրապարակում աթլետիկական փակ մարզասրահի կառուցում
Ծրագրի իրականացման վայրը (մարզ, համայնք)	ՀՀ Սյունիք, ք.Կապան, Լեռնագործների 16
Ծրագրի ղեկավարը/համակարգողը (հեռախոսահամար, էլ-փոստի հասցե)	Կապան համայնք, հեռ. 0285-42036 060-52-18-18, kapanmayor@gmail.com
Դիմորդի գործունեության հասցեն (համայնք, փողոց, շենք, հեռախոսահամար, էլ-փոստի հասցե)	ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան, Ա.Մանուկյան 5ա հեռ. 0285-42036 060-52-18-18 kapanmayor@gmail.com
Կառուցման ժամկետը	5 տարի
Ծրագրի ընդհանուր բյուջեն՝ ՀՀ դրամով	1.500.000.000 հհ դրամ

Համայնքի ղեկավար՝ Գ. Փարսյան

Ամսաթիվ՝ «02» օգոստոս 2022թ.

ԿՆԻՔ

1.Առաջարկվող ծրագրի նկարագրություն

Հիմնախնդրի ձևակերպումը և հիմնավորումը – Լեռնագործների փողոցի թիվ 16 հասցեում գտնվող <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզահրապարակում աթլետիկական փակ մարզասրահ կառուցելու անհրաժեշտությանը:

Կապանում գործում է երեք մարզադպրոց, սակայն դրանցից երկուսը՝ Աթլետիկայի մասնագիտացված մանկապատանեկան և Դ.Համբարձումյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոցները տեղակայված են մեկ շենքում՝ Մ.Պապյան 1ա հասցեում: Համայնքի մարզադպրոցներ հաճախող երեխաների թիվը շուրջ 600 է և անընդհատ աճում է, ու նոր մարզադպրոցի կազմակերպումը անհապաղ լուծում պահանջող խնդիր է:

Կապան համայնքում հաշվառված և ապրում է մոտ 45000 բնակիչ, որից շուրջ 1600-ը նախադպրոցական, 5000-ը՝ դպրոցական հասակի երեխաներ են: Համայնքում մարզադպրոցների շենքային պայմանների բացակայության պատճառով երեխաների զգալի մասը չի կարողանում հաճախել մարզադպրոց , ինչի պատճառով էլ դպրոցում ունենում են բարոյահոգեբանական, ուսումնական դժվարություններ: Հարկ է նշել, որ համայնքի մարզադպրոցները ծանրաբեռնված են և ունեն բավական թվով հերթագրված երեխաներ, որոնց ընդունումը կապված գործող խմբերի հագեցվածության և ելնելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված չափորոշիչների, անհնար է: Փաստորեն Կապան համայնքի երեխաաների համար ստեղծվել է անհարմար իրավիճակ՝ կապված ուսումնամարզական գործընթացը լիարժեք իրականացնելու առումով:

Հասարակական կյանքի զարգացման համար անհրաժեշտ բարեկարգ պայմաններ ապահովելու, երիտասարդ ընտանիքներին աջակցելու, բնակիչների քաղաքացիական ակտիվության մակարդակը բարձրացնելու, նրանց համար խիստ կարևոր նշանակություն ունեցող և նրանց կողմից բարձրացրած հարցերին արդարացի և ճիշտ լուծում տալու, երեխաների մարզումային առօրյան լավագույնս կազմակերպելու համար բարվոք պայմաններ ստեղծելու, մատաղ սերնդի դաստիարակության հարցերը գտնվում են պետության և համայնքի հսկողության ներքո: Դաստիարակված, համակողմանի և ներդաշնակ զարգացած մատաղ սերունդ կրթելու, առողջ ապրելակերպով ապահովելու, պետության կայացման և առողջ հասարակություն ձևավորելու, նրանց ուսուցման և դաստիարակության գործընթացը ճիշտ կազմակերպելու, հնարավորինս սեղմ ժամկետներում աթլետիկական փակ մարզասրահ կազմակերպելու, ժամանակակից պահանջներին բավարարող մարզակառույց ունենալու համար նպատակահարմար ենք համարում վերակառուցել <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզահրապարակը:

Բնակելի որոշ թաղամասերում բակային խաղահրապարակների, խաղամիջոցների բացակայության պատճառով բնակիչները և երեխաները զրկված են իրենց ազատ ժամանցը անցկացնելու մինիմալ հնարավորություններից: Ներկա սոցիալական պայմաններում թաղամասի բնակիչների ու երեխաների որոշ մասը հնարավորություն չունեն ամառային արձակուրդներին իրենց հանգիստը կազմակերպել առողջարաններում կամ ճամբարներում:

Կապանը աթլետիկական ավանդույթներով համայնք է և միշտ ցուցաբերել է բարձր արդյունքներ ու փայլել միջազգային ասպարեզներում: Ներկայումս նույնիսկ հանրապետության ազգային հավաքականի առաջատար աթլետների շարքերը համալրում են կապանցիները:

Սկսած 1980 թվականներից աթլետիկական փակ մարզասրահ ունենալու խնդիրը եղել է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում, սակայն ԽՍՀՄ-ի փլուզման, քաղաքի՝ հայ-ադրբեջանական պատերազմական գործողությունների կիզակետում գտնվելու, ժամանակավոր զինադադար հայտարարելուց հետո հրետակոծված բնակելի շենք-շինությունների վերականգնման անհրաժեշտության, համայնքի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի, բյուջեի սղության պատճառով հնարավոր չի եղել վերոնշյալ խնդրին լուծում տալ:

Համայնքում աթլետիկական փակ մարզասրահ ունենալու հարցը քննարկվել է ավագանու, հասարակական կազմակերպությունների, բնակչության լայն շրջանում. քննարկումների արդյունքում որոշվել է, որ անհրաժեշտ է հարցը լուծել սեղմ ժամկետում և անհապաղ, իսկ դա հնարավոր է իրականացնել <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզահրապարակում մարզասրահ կառուցելու պարագայում:

2. Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները

Ծրագրի նպատակը - Կապան համայնքում հիմնել նոր աթլետիկական փակ մարզասրահ:

Ակնկալվող արդյունքները՝

- Լուծում կստանա համայնքի համար կարևոր հիմնախնդիր:
- Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի երեխաները կօգտվեն միջազգային չափորոշիչներով կառուցված մարզասրահից, իրականացնելով ֆիզիկական կուլտուրայի դասերը նշված մարզասրահում:
- <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզահրապարակի վերակառուցման՝ աթլետիկայի փակ մարզասրահ կազմակերպման ժամանակ համայնքի մոտ 50 բնակիչներ կունենան ժամանակավոր աշխատանք:

3.Բարեգործությունից օգտվող անձանց թիվը

Օգտվողները	2027թ.	2028թ.	2029թ.	2030թ.	2031թ.
Աթլետիկայի մարզադպրոցի սաների թիվը	130	140	160	190	220
Աթլետիկայի մարզադպրոցի աշխատողների թիվը	25	28	32	38	45
Կապանի թիվ 1 հիմնական դպրոցի աշակերտների թիվը	520	530	530	550	550
Ուսումնամարզական հավաքների մասնակիցների թիվը	20	40	40	50	70
Քաղաքացիների թիվը (առողջ ապրելակերպով զբաղվողները)	30	35	40	50	60
Ընդամենը	725	773	802	878	945

4. Նպատակներին հասնելու համար նախատեսված գործողությունները/ ռազմավարությունները.

4.1. Որպես համայնքային սեփականություն ձեռք բերել <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի 0.30468 հա մակերեսով մարզահրապարակի տարածքը:

4.2. Համայնքապետարանում ընթանում է <<Կապանի թիվ 1 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի մարզահրապարակում աթլետիկական փակ մարզասրահ կառուցելու նպատակով անհրաժեշտ աշխատանքային ծրագրի մշակման և ժամանակացույցի կազմման գործառույթներ:

4.3. Աշխատանքների իրականացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում:

4.4 Համայնքը միջոցներ է ձեռնարկում մարզասրահի կառուցման աշխատանքների իրականացման համար դիմել նաև տեղական և միջազգային դոնոր կազմակերպություններին: Ներկա դրությամբ համայնքապետարանում ընթացքի մեջ է մարզասրահի կառուցման աշխատանքների իրականացմանն ուղղված նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմմանն ուղղված գործառույթները:

5. Ներդրումների ծավալը և ժամանակացույցը

Ծրագրին նախատեսվում է 1.500.000.000 ՀՀ դրամի ներդրում, որից 500.000.000 դրամը՝ համայնքի բյուջեից: Ծրագրի իրականացման համար համայնքը նախապատրաստվում է դիմել համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրին, ինչպես նաև դոնոր կազմակերպություններին:

Ներդրումների տեսակը	**2023թ. (Հազար դրամ)**	**2024թ. (Հազար դրամ)**	**2025թ. (Հազար դրամ)**	**2026թ. (Հազար դրամ)**	**2027թ. (Հազար դրամ)**	**Ընդամենը 2023-2027թ.թ. (Հազար դրամ)**
Շինության կառուցում (համայնքի ներդրում)	15000,0	--	150000,0	150000,0	185000,0	500000,0
Շինության կառուցում (կառավարության ներդրում)	--	--	285000,0	285000,0	321000,0	891000,0
Շինության կառուցում (դոնորների ներդրում)	--	--	40000,0	40000,0	29000,0	109000,0
Ընդամենը	15000,0	--	475000,0	475000,0	535000,0	1500000,0